փում 40 տուն Բոզվանդ գիւղի աղքատ քահանան։ Բայց ասում են դրանց սատանի հրամայված է առաջնորդից թէ հրաւիրմամբ և թէ պատահմամբ այդ գիւղերում օրինակառարութիւն չանել և չը վնասել գործակալ հօր շահերին, Մինչ կարելի չէր որ հոգևոր իշխանութիւնը այդ յուսահատված գիւղացիների դառը վիճակը թեթևացնելու և հեշտացնելու համար բաժանէր դրանց յիշեալ 5 քահանաների վրա, կամ թէ գտնէ հենց ամենքը յանձնէր Ղալագեայի երեք քահանաներին, որ իւրաքանչիւրը առանձին առանձին հովվէին և կամ հերթապահութեամբ, և ոչ թէ Ղալագեայի կէսը թողել երկու քահանաներին, իսկ կէսի հետ 8, 12, և 15 վերստում երեք գիւղն էլ իր գործակալին զոհէր, և քաղցած երեխաների հացը ձեռներից խլելով զցէ մի չահանդրի։

Ցայսնելով այս փաստերը խմբագրիդ, խոնարհաբար խնդրում ենք իրրև ազգային մամուլի ներկայացուցչի, հրաւիրել Էջմիածնի հոգևոր իշխանութեան ուշադրութիւնը թշուառ Ուչալցոց, Աղայիշենացոց և Գեօկչացոց վրա։ Շամախու արքի հոգևորական իշխանութեան կամայականութիւնը բոլորովին հակառակ է Վեհափառ Հայրապետից պարգևած հրամանդին։

* * *

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 13-ին, Արծրունու թատրոնում մի կենդէրտ ներկայացումն կար, որին մասնակցեց պ. Մոյինեան։ Պարոնի ձայնը, որ մենք առաջին անգամ ենք լսում, մի կատարեալ գանձ է, թէև անմշակ գանձ։ Շատ հազիւ է պատահում լսել տէնօրների մեջ ամենաբարձր ձայները այդքան մաքուր, կուրծքի ձայներ, ինչպէս պ. Մոյինեանի մեջ։ Դժբաղդաբար հասարակութիւն գրեթէ չը կար թատրոնում։ Եթէ պ. Մոյինեան ուսում առնի, նա կարող է դառնալ նշանաւոր երգիչ։ Ասում են պարոնը միջոցներ չունի, որ գնայ եւրաժշտական դպրոց, այնտեղ իր ձայնը կատարելագործելու։

—

Մեզ պատմում են, որ մի շատ հարուստ թիֆլիսեցի հայ, որին պ. Մոյինեան մի լօժայի ասմսակ էր ուղարկել իր կօնցէրտի համար, վերադարձրել է պարոնին իր տոմսակը, առանց փող վճարելու։ Ի հարկէ, թէ կարելի է պահանջել այդ տեսակ մի հաբուստից։ Նա կարծում է որ այդ ներկայացումը նման է այն բոլոր սիրողների ներկայացումներին, որոնք չատ անգամ տրվում են մեզանում այս ինչ, այն ինչ մարդու համար փոքր ինչ փող հաւաքելու։ Մի տէտ, հարուստ հայից չէ կարելի պահանջել, որ նա այնքան գեղարուեստական զարգացում և ճաշակ ունենայ, որ հասկանայ թէ Մոյինեանի ձայնը ոչ թէ միայն մեզանում, բայց և ամեն երկրում հազուադիւտ և նշանաւոր ձայն կը համարվէր և ամեն երկրում կաշխատէին այդ տեսակ գանձ ունեցող չքաւոր երիտասարդին օգնել իր ուսումը շարունակելու։

—

Մեզ գրում են ԱԽԱԼՑԻԱՑԻՑ. «Էջմիածնական կալուածները Ախալցխայում գտնվում են չատ անենախնձելի դրութեան մէջ, որովհետև Էջմիածինը խաբվում է, նշանակելով վաշխառու կառավարիչներ իր կալուածների վրա։ Թիֆլիսցան գիւղի անտառը թերևս նախկին վաշխառուի ձեռքումն է։ Նա աթոռականաց պարտէզների կալվի, (ընկուզենու) ծառերը կտրում և վաճառում է առանց Էջմիածնի գիտութեան։»

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Յովհաննէս Նազարեանցի «Հայոց լեզուի ուսուցիչ» աշխատասիրութեան չորրորդ տարեայ դասագիրքը։ Գիրքը ունի ի հարկէ իր արժանաւորութիւնները, բայց մի և նոյն ժամանակ խորհուրդ կը տայինք այդ տեսակ գրքեր կազմողներին աւելի ինքնուրոյն կերպով կազմել և ոչ թէ հետեւել ստրկաբար մի որ և է ռուս դասագրքին։ Օրինակ հեղինակը պատմում է թէ ինչ է արդիւնաբերում բնութիւնը օգոստոս ամսին և ասում է հետեւեալը, այսպիսով մոլորեցնելով մանուկների հասկացողութիւնը։ «Օգոստոս ամիսը պտղաւէտ ամիս է և գեղեցիկ խնձորներով ու տանձերով է զարդարվում։ Առաջ բերում է մեզ ծիրան, յետոյ տեսակ տեսակ անուշահամ դեղձեր, վերջը կամաց կամաց գալիս են սեխն ու ձմերուկը, վարունկն ու լոբին, դդումը և սոցա նման զովարար բոյսեր։» (Երես 72)։ Ուրեմն ամիսը զարդարվում է դեղեցիկ խնձորներով ու տանձերով, իսկ տգեղ խնձորներով ու տանձերով երբ է զարդարվում։ Բացի սոցանից վարունկը, խաբը միթէ օգոստոսին է գալիս, ընդհակառակն օգոստոսին վերջանում է, իսկ մայիսին է լինում արդէն։ Եւ հեղինակի կարծիքով դդումը, լոբին պտուղներ են և այն էլ զովարար։ Ինչ կը նշանակի այդ տեսակ դասագրքեր գրել, թարգմանելով նրանց ստրկաբար օտար դասագրքերից առանց սեփական ուղեղով մտածելու։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են որ շուտով կը վերցնվի Ս. Պետերբուրգում եղած Կովկասեան կօմիտէտը, աչքի առաջ ունենալով այն վերանորոգութիւնները, որոնք պէտք է կատարվեն Կովկասեան փոխարքայութեան մէջ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՊԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՆԱԳՈՒՄԸ

Եւրոպական հասարակական կարծիքը գրաւող իրլանդական, Ցունիսի, հրէական և գաղթականութեան խնդիրներին աւելացաւ մի նորը, պապական խնդիրը։ Թէպէտ այդ խնդիրը կատարեալ նոր չէ կարելի անուանել, որովհետև 20 տարի է, ինչ նա գոյութիւն ունի, սկսեալ այն օրից, երբ սկսվեցաւ Իտալիայի միութեան գործը, բայց վերջին ժամանակներում նա չափազանց լարվեցաւ և ընդհանուր եւրոպական նշանակութիւն ստացաւ։ Պապը նորից յայտնում է, որ նրա գրութիւնը անտանելի է, որ նա ստիպված է Վատիկանի մէջ գերի մնալ և որ նա չէ համաձայնվում երեսալ Հռոմի փողոցների վրա։

Լէօն XIII այդպիսի բովանդակութեան մի ճառ արտասանեց Հռոմէական կօնսիստորիայի առաջ այն տխուր անկարգութիւնների առիթով, որ պատահեցաւ Հանգուցեալ պապ Պիոս IX մարմնի տեղափոխութեան ժամանակ։ Հռոմէական եկեղեցու առաջնորդի կողմից դա մի նոր մեղադրանք էր իտալական կառավարութեան դէմ, որ լրացնում էր կարդինալ Եակոբինիի կողմից եւրոպական պետութիւններին դեռ առաջ ուղարկած գանգատը։

Օգոստոսի 7-ին Հռոմի մէջ նոր անցքեր պատահեցան, որոնք միջոց են տալիս պապական կառավարութեանը մատնացոյց լինել այն փոնդի վրա, որ սպառնում է կաթոլիկութեան պետին Իտալիայի մայրաքաղաքի մէջ։ Ցիրապատելով Հռոմին, Վիկտոր Էմմանուէլ իտալական թագաւորի կառավարութիւնը ապահովեց պապական անկախութիւն։ Այդ օրէնքի մէջ ասված է. «պապի անձնաւորութիւնը սուրբ և անմատչելի է։» Այդ օրէնքով իտալական կառավարութիւնը կաթոլիկ աշխարհի առաջ պարտաւորվել է չը թոյլ տալ ոչ մի բան, որ խանգարէր պապի ազատութիւնը իր պարտականութիւնները և կաթոլիկ եկեղեցու պէտքերը հոգալու ժամանակ, պարտաւորվել է եւրոպայի առաջ պաշտպանել պապի իրաւունքները, իրրև մի անկախ թագաւորի իրաւունքներ։ Բայց այդ պարտականութիւնը յանձն առնող կառավարութեան աչքի առաջ մի քանի հազար մարդիկ մի ժողով կայացրին, որի ժամանակ թէ պապութիւնը և թէ նրա ներկայացուցիչները, որոնց թուումն էր և Լէօն XIII պապը նախատինքների և անէծքների ենթարկվեցան։ Բացի այդ պապի չափից դուրս թշնամի այդ ժողովի առաջնորդները մի վճիռ կայացրին, որ պահանջում է կառավարութենից անուշադիր թողնել պապի ապահովութեան մասին օրէնքը և անյապաղ գրաւել պապական պալատները, ուրիշ խօսքերով արտաքսել պապին Հռոմից։

Այդ վճիռը հեռևևալն է. «Ի նկատի առնելով, որ պապութիւնը և իտալական միութիւնը պատմական և քաղաքական հակասութիւն են կազմում, որ պապերը 35 անգամ հրաւիրել են օտարներին յարձակվել Իտալիայի վրա, որ պապութիւնը վնասում է իտալական ազգի ինքնակալութեանը, որ Աստուածային իրաւունքը, որի վրա յենված է պապութիւնը, չէ համապատասխանում իտալական ժողովրդական իրաւունքներին, որ պապութիւնը իրրև կրօնական հիմնարկութիւն իր ոգով, սկզբունքներով և նպատակներով մերժում է մտքի ու խղճի անկախութիւնը, հակառակ է ամեն մի նոր իրաւացի գաղափարին և կորչում է միջին դարերի խաւարի մէջ, որ ապահովութեան մասին օրէնքը, իբրև պապի բարձրագոյն հեղինակութեան հիմք, նորից յարուցանում է այդ խաւարը իր բոլոր հետևանքներով, Ի նկատի առնելով այս բոլորը, հռոմէական ժողովուրդը պահանջում է փոխել այդ օրէնքը և գրաւել առաքելականների պալատները։»

Ճշմարիտ է, այդ վճիռը այնպիսի մարդիկ են կայացրել, որոնց հետ իտալական կառավարութիւնը համերաշխ չէ և դա համակրութեամբ ընդունվեցաւ Եւրոպայի մէջ այնպիսի մարդկերանցից, ինչպէս Լուի Բլան, Վիկտոր Հիւգո, Ցերունի Գարիբալդի, որոնց կարծիքները պապականութեան մասին արդէն փաղուց յայտնի են, մինչև անգամ պօլիցիայի միջամտութեան շնորհիւ վճիռը չը կարդացվեցաւ, բայց այնու ամենայնիւ պապը այդ ժողովից վիրաւորված է։ Պապական կառավարութեան համար այդ ժողովը մի գիւտ է, և այդ պատճառով թէ կղերական և թէ արմատական լրագիրները շտապեցին հրատարակել թէ ժողովի մէջ արտասանած ճառերը և թէ վերոյիշեալ վճիռը։ Կառավարութիւնը կաշանուրից այդ լրագիրները, որոնք նրա դրութիւնը գժուարացրին, տպագրելով այն, ինչի ընթերցանութիւնը արգելված էր պօլիցիայից և այդպիսով հեռացրեց իրանից պատասխանատուութիւնը արմատական կուսակցութեան օգնութեան համար։ Բայց պապական մինիստրները կարող են պնդել, որ իտալական կառավարութեանը առաջուց յայտնի էին այդ ժողովի նպատակները, իսկ նա հանգստութեամբ նայում էր ժողովի համար տեսնող պատրաստութիւններին և նրանց արդելքներ չէր դնում։ Իտալական կառավարութիւնը կարող է ի հարկէ մատնացոյց լինել իտալական սահմանադրութեան վրա, որ ապահովում է ամեն տեսակ ժողովների իրաւունքը փակված տեղերում, բայց այդ ձևական արդարութիւնն էլ առիթ կը տայ պապին դանգատվել իր դրութեան անապահովութեան վրա։

Լուր է տարածված, որ պապը, ի նկատի առնելով այդ հանգամանքները, մտադիր է թողնել յաւիտենական քաղաքը և տեղափոխվել Մալտա կղզին և անգլիական օրէնքների ապահովութեան տակ լինել։ Եթէ պապը կատարէ իր այդ մտադրութիւնը, իտալական կառավարութեանը նա մեծ դժուարութիւններ կը պատճառէ և Հռոմն էլ կը կորցնի համաշխարհային մայրաքաղաքի նշանակութիւնը։ Բացի այդ պապի տեղափոխվելը առաջ կը մղէ պապական խնդիրը, որ կը գրգռի ամբոխին և որ դժուարութիւններ կը պատճառէ ամբողջ Եւրոպային։

—

ՎԱՀԵՐԱՑՈՒՄ ԱԶԱՐԵԱՆԻ

Հռոմէական ազգայնոց Պատրիարքարանը Գերջ. Ազարեան սրբազանի ընտրութեան առթիւ Հռոմայ Ս. Պապը կարդնալաց ժողովին մէջ հետևեալ յայտարարութիւնն ըրեր է։

„Հիմա, յարգելի եղբարք, խնդութեամբ կը ծանուցանեմ ձեզ Հայոց Կիլիկիոյ կաթողիկոսին նորոգ ընտրութիւնը։ Երբ այն ցաւալի հերձուածը վերջանալու վրայ էր, մեր յարգելի եղբայր Անթոնան Հասուն, որուն հռոմէական ծիրանին տուինք իւր արժանեաց համար, Պատրիարքութենէ հրաժարեցաւ։ Ուստի այնպէս կարգադրեցինք որ մեր յարգելի եղբայրները, Հայոց եպիսկոպոսունք սինոդոյ կազմեն և նոր Պատրիարքի մ՝ընտրութեան ձեռնարկեն. ուստի յուլիս 6-ին Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ սինոդը գումարելով, քուէից մեծամասնութեամբ Նիքոսիայի Պետրոս Ա. զարեան արքեպիսկոպոսը Պատրիարք ընտրեց որ և անուանեցաւ Պետրոս Գ.։

„Հայ եպիսկոպոսները յուլիս 8 թուականաւ յատուկ գրութեամբ մը սոյն ընտրութեան վերաբերեալ տեղեկութիւնները հաղորդեցին մեզ։ Սոքա գիտնալով որ Պատրիարքական արժանաւորութիւնը իւր բոլոր ոյժն ու զօրութիւնը երանելի Պետրոսին առաքելոց երիցագունէն կընդունի, որ Աստուծոյ կողմանէ գառանց և այծերու վիրակացու կարգուելով, „ինքն միայն ունի երկնից արքայութեան բանալին“, խնդրեցին մեզմէ սոյն ընտրութիւնը վաւերացնել առաքելական իշխանութեամբ մերով։

„Մի և նոյն խնդիրն եղաւ մեզ նորընտիր Ազարեան Պատրիարքէն ալ, որ յուլիս 8 թուականաւ գրութեամբ մը վերստին կը կրկնէր այն հաւատոյ դաւանութիւնը զոր և սինոդին առաջ յայտարարած էր։ Սոյն նամակաւ իւր յարգանաց և բարեկամութեան զգացումներն ալ յայտնած է առ առաքելական աթոռն և նորա իշխանութեան հաւատարիմ մնալ խոստացած է։

«Մենք հաւատի ենք, յարգելի եղբարք թէ նորընտիր Պատրիարքը որ իւր վարած բազմազան պաշտօններուն մէջ միշտ հաւատարմութիւն առ Հռոմէական եկեղեցին, միշտ փորձառութիւն և եկեղեցոյ միութեան անդեղի պահպանութեան համար եռանդ ու նախանձ ցուցցած է, ինչ կարելի ջանք պիտի ընէ հոգիներու փրկութեան և իւր մեծ պաշտօնին մէջ բարի հովուի մը պարտաւորութիւնները կատարելու և ժողովուրդը գոհ ընելու համար։ Այս վստահութեամբ և Արևելեան գրոծոց փրոփականտայի ժողովին կարծիքն առնելէ ետև, ըստ խնդրանաց Պատրիարքին և Հայ եպիսկոպոսաց որոշեցինք սոյն ընտրութիւնը հաստատել և Պետրոս Ազարեանը Հայոց Կիլիկիոյ Պատրիարք հռչակել։

„Ուստի իշխանութեամբ Ամենակարողին Աստուծոյ, սրբոց առաքելոցն Պետրոսի և Պողոսի և մերով իշխանութեամբ կը հաստատենք Հայ եպիսկոպոսաց՝ մեր յարգելի եղբարց կատարած սոյն ընտրութիւնը ցանձին Պետրոս Ազարեանի զոր Նիքոսիոյ եկեղեցեաց պաշտօնէն բաժնելով, Հայոց Կիլիկիոյ կաթողիկոսական պաշտօնին կը բարձրացնեմ, զայն մի և նոյն եկեղեցոյ հովիւ և Պատրիարք կարգելով։ Ցանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ“։

(Հայրենիք)

—

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„Մասիս“ լրագրի մէջ ևս տպվեց Միացեալ ընկերութեանց նախկին Ցնորէն ժողովի